ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 6

## ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
## 2020 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

*Օրակարգում՝*

1. 2019-20 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում (զեկուցող՝ Ա. Սարգսյան):
2. Ս/թ. մարտին ԵՊՀ-ում կայանալիք «Էքսպո» ցուցահանդեսին ֆակուլտետի տաղավարի պատրաստման աշխատանքների մասին (զեկուցող՝ բ.գ.դ., պրոֆ. Ա. Աբաջյան):
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը ամբիոններում:
4. Մագիստրատուրայի կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 37 անդամներից նիստին մասնակցում է 29-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ին՝** 2019-20 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքնե-րի ամփոփման **հարցի** մասին հաղորդումներով հանդես եկավ դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես նկատեց, որ վերջերս ինչ-որ անտրամաբանական բան է նկատվում, այն է՝ ուսանողները դժկամությամբ են ներկայանում քննություններին: Եվ ահա պատկերը հետևյալն է՝ 1-ին լուծարքից հետո պարտքեր ունեցողներն են՝

1-ին կուրս – 13 ուսանող

2-րդ կուրս – 4 ուսանող

3-րդ կուրս – 24 ուսանող

4-րդ կուրս – 38 ուսանող:

**Օրակարգի 2-րդ՝** 2020 թ. մարտին ԵՊՀ-ում կայանալիք «Էքսպո» ցուցահանդեսին ֆակուլտետի տաղավարի պատրաստման աշխատանքների **հարցի** մասին զեկուցմամբ հանդես եկավ բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյանը: Նա նշեց, որ մարտի 27-ին ԵՊՀ-ում կայանալու է «Էքսպո» ցուցահանդես՝ դիմորդներին դեպի համալսարան ուղղորդելու համար: Այդ նպատակով ցուցահանդեսին մասնակցելու են բոլոր ֆակուլտետները, այդ թվում՝ նաև հայ բանասիրությանը: Մեզ հատկացվելու է 1 տաղավար, որտեղ կցուցադրվեն մեր՝ վեր-ջին տարիներին տպագրած գրքերը: Ունենք բավական եռանդուն ուսանողներ, որոնք ար-դեն տեսահոլովակներ են պատրաստել և օգնում են դեկանատին: Բուն տեսահոլովակի տևողությունը 10-15 րոպե է: Պրոֆ. Ա. Աբաջյանը խնդրեց բոլոր ամբիոնների վարիչներին, որպեսզի նրանք ներկայացուցիչներ ընտրեն, պատրաստեն բուկլետներ, ծրագրեր և հնա-րավորինս գրավիչ ներկայացնեն հայ բանասիրության ֆակուլտետը:

**Օրակարգի 3-րդ հարցի** առիթով (ավարտական աշխատանքների և մագիստրոսա-կան թեզերի կատարման ընթացքը ամբիոններում) ելույթ ունեցավ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքում նա ընդգծեց, որ հարցն անչափ կա-րևոր է. ուսանողներից պետք է աշխատասիրություն ու ջանասիրություն պահանջել և ա-րագացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ըն-թացքը: Այնուհետև ելույթ ունեցան բոլոր ամբիոնների վարիչները և նկատեցին, որ այդ առիթով մտահոգություններ չունեն. աշխատանքներն ընթանում են բնական հունով, և պարբերական են ղեկավարների՝ ուսանողների հետ հանդիպումներն այդ առիթով:

Գիտական խորհրդի նիստի **օրակարգի 4-րդ հարցի** (մագիստրատուրայի կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների ամփոփում) առիթով հանդես եկան ամբիոնի վարիչներ պրոֆ. Յու. Ավետիսյանը և պրոֆ. Ա. Աբաջյանը: Նրանք ներկայացրին հետևյալ ամփոփումը.

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Կրթական ծրագրի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթ

Հայ բանասիրության ֆակուլտետ

023101.00.7 - «Հայոց լեզու և գրականություն»

Կրթական ծրագիր՝ 023101.03.7 - «Հայոց լեզվի պատմություն և ընդհանուր լեզվաբանություն»

Ուսուցման ձևը՝ առկա

Շնորհվող որակավորումը՝ բանասիրության մագիստրոս

Ծրագրի սկզբնական հաստատման ամսաթիվը- 2017/2018

Ծրագրի նախորդ մոնիթորինգի ամսաթիվը՝ մոնիթորինգ չի անցկացվել

Ծրագրի նախորդ վերանայման ամսաթիվը՝ ----

1. **Նախորդ մոնիթորինգի արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը**

Հաշվետվության ենթակա են պլանով նախատեսված բոլոր միջոցառումները:

| N | Միջոցառում(գործողություն) | Կատարողական | Պատասխանատու անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| | | Մոնիթորինգ չի կատարվել | | |

2. **Ծրագրի քանակական բնութագրերը**

| Ուսումնական տարի | 2016/17 | 2017/18* | 2018/19 |
|---|---|---|---|
| **Ընդունելությունը և ուսանողական համակազմը** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Դիմորդների թիվը (այդ թվում 1-ին հայտով) | 11 | 17 | 4 |
| Ընդունելության մրցութային ցուցանիշը և անցողիկ շեմային միավորը | 1/1 «լավ» | 1/1 «լավ» | 1/1 «բավ.» |
| Ընդունված ուսանողների թվաքանակը և ընդունելության միջին միավորը | 17 «լավ» | 11 «լավ» | 4 «լավ» |
| **Ուսումնական առաջադիմության ցուցանիշները** | | | |
| *«Գերազանց»*, *«լավ»* և *«բավարար»* գնահատականների բաշխումն ըստ ուսանողների թվի (%-ով) | Գ. 52 % Լ. 35,5 % Բ. 12,5 % | Գ. 77% Լ. 12 % Բ. 11 % | Գ. 87 % Լ. 23 % |
| Ծրագրում ընդգրկված ուսանողների հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) | 18, 23 | 19,64 | 19,1 |
| Դուրս մնացած ուսանողների թիվը | 0 | 0 | 0 |
| **Տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ** | | | |
| Շրջանավարտների թիվը | 11 | 17 | 4 |
| Ամփոփիչ ատեստավորման արդյունքներով *«Գերազանց»*, *«լավ»* և *«բավարար»* գնահատականներ ստացածների բաշխումը (%-ով) | Գ. 80 % Լ. 15 % Բ. 5 % | Գ. 64,7% Լ. 35,3 % Բ. 0 % | Գ. 100 % Լ. 0 % |
| Հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակող ուսանողների մասնաբաժինը | 1 | 2 | 1 |
| Մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատանքի անցած շրջանավարտների մասնաբաժինը** | 14 ուս. | 10 ուս. | 4 ուս. |

* 2017-18 ուսումնական տարում ընդունելություն կատարվել է «Հայոց լեզու» ծրագրով: Ներկայացված են այս ծրագրին վերաբերող տվյալները:

** Որոշ ուսանողների տվյալներ պարզել չի հաջողվել:

### 3. Ուսանողական հարցումների արդյունքները

Ծրագրում դասավանդվող դասախոսները ուսումնական հարցումներում հիմնականում բարձր են գնահատվել: Միջին գնահատականը 4,7 է: Ուսանողների մեծամասնությունը գոհ է դասախոսների մանկավարժական մոտեցումներից, նյութի մատուցման որակից, դասավանդման մեթոդներից: Իբրև հիմնական թերություն՝ նշվում են բակալավրիատում անցածի պարզ կրկնության դեպքեր: Բացի դրանից՝ դժգոհություն կա առաջին կիսամյակում ընդգրկված որոշ դասընթացների ընդհանրական բնույթից: Կան առաջարկություններ գիտության արդի ձեռքբերումների հետ կապված մասնագիտական նեղ դասընթացների ընդգրկման վերաբերյալ: Ըստ այդմ՝ կատարվում են համապատասխան քայլեր, դասընթացների փոփոխություններ, առարկայական ծրագրերի վերանայումներ:

### 4. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները

Մագիստրատուրայի շրջանավարտները հիմնականում ցանկություն են հայտնել, որ նյութերի դասավանդման ժամանակ տեսադիտողական նյութերը՝ սահկաշարերը առավել լայն կիրառվեն՝ միջազգային ստանդարտներին համապատասխան, գիտահետազոտական աշխատանքի հիմնունքերի ձևավորմանը ավելի շատ ժամանակ ընձեռվի, բարձրացվի գիտական աշխատանքով զբաղվելու ուսանողի մոտիվացիան: Ֆոկուս խմբի խմբի կողմից հարցված ուսանողները վկայում են, որ ուսուցման իրենց տարիների ընթացքում քննարկումային-բանավիճային մթնոլորտ է ապահովվել, ուսանող և դասախոս կապն ամուր է եղել: Կարևորել են գործնական ուսուցումը համապատասխան վայրերում անցկացնելու հնարավորությունների ստեղծումը՝ Մատենադարանում, գրապահոցներում, խմբագրություններում:

### 5. Ծրագրի շահակիցների արձագանքը

Դասավանդող կազմի և ուսանողների նկատառումները հաշվետու ժամանակաշրջաններում ճշտվել են շահագրգիռ քննարկումների և բանավոր ու գրավոր հարցումների միջոցով: Ուսանողները հիմնականում կարևորել են մասնագիտական անգլերենի դասավանդումը բավարար ժամաքանակով, պրագործնական աշխատանքներին տրվող ժամաքանակի մեծացումը, որպեսզի հնարավորություն ունենան ձեռք բերած տեսական

գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ ձևավորել: Ֆոկուս խմբի հաշվետվության մեջ նշված է, որ ուսանողները գոհ են իրենց ընտրած մասնագիտացումից, արդյունավետ են համարում իրենց ուսուցումը, կարծում են, որ աշխատաշուկայում հնարավորություն կունենան մրցունակ լինել՝ շնորհիվ ձեռք բերած գիտելիքների և հմտությունների: Դասավանդող դասախոսներն ընդգծել են, որ անհրաժեշտ է տվյալ մասնագիտացման բացումը չշաղկապել դիմողների թվաքանակի հետ, որովհետև կան նեղ, բայց շատ կարևոր մասնագիտացումներ, որտեղ չեն կարող մեծաքանակ դիմողներ լինել:

### 6. Համագործակցային կապերը

Համագործակցային կապերն ամրապնդելու նպատակով հստակ պարբերականությամբ կազմակերպվում են գիտաժողովներ հարակից գիտամանկավարժական հաստատությունների, ինչպես նաև ԵՊՀ ստորաբաժանումների ներկայացուցիչների ներգրավմամբ՝ միջմասնագիտական փոխգործակցությունը խորացնելու նպատակով: Այս տեսանկյունից անհրաժեշտ է ավելի աշխուժացնել փոխառնչվող մասնագիտացումների ուսանողների և դասախոսների, հատկապես աշխատատու հաստատությունների հետ կապերը՝ համատեղ գործունեության տարբեր ծրագրերի առաջմղմամբ:

### 7. Ծրագրի փոփոխությունները

Ուսումնական ծրագրերը փոփոխություններ հաշվետու ժամանակաշրջանում չեն կատարվել: Առաջարկում ենք ներդնել «Գրաբարից արդի հայերեն թարգմանության հիմունքներ և հմտություններ» դասընթացը՝ ծրագրի՝ թարգմանիչ պատրաստելու ուղղություն ուժեղացնելու համար:

### 8. Ծրագրի նախորդ մոնիթորինգի, վերանայման և/կամ արտաքին գնահատման արդյունքները

Ծրագրի նախորդ մոնթորինգ չի անցկացվել:

### 9. Ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, տարածման արժանի լավագույն փորձը

«Հայոց լեզվի պատմություն և ընդհանուր լեզվաբանություն» ծրագրով մագիստրատուրան 2016-17 ուստարում ավարտել է 11 մարդ, 2017-18 ուստարում՝ 17 ուսանող «Հայոց լեզու» ընդհանուր ծրագրով, որոնցից 4-ը ավարտական աշխատանք են գրել հայոց լեզվի պատմությունից և ընդհանուր լեզվաբանությունից: 2018-2019 թթ. ընդունված, այսօր

արդեն 2-րդ կուրսի ուսանողները 4-ն են, առաջին կուրսում ունենք 5 ուսանող: Բերված տվյալներից ակնհայտ է, որ առկա է ուսանողների թվի նվազում, Հիմնական պատճառներից մեկը ֆակուլտետում բակալավրիատն ավարտող ուսանողների թվի ընդհանուր նվազումն է: Անհրաժեշտ է աշխուժացնել բակալավրիատում «Հայոց լեզվի պատմություն և ընդհանուր լեզվաբանություն» ծրագրի ներկայացման և առաջմղման աշխատանքները, որպեսզի ավելի շատ ուսանողներ ներգրավվեն համատեղ հետազոտական-գիտական աշխատանքներում:

Ուսանողների առաջադիմությունն ընդհանուր առմամբ բարձր է, նրանց հետ ծրագրի դասախոսների փոխադարձ կապն անհրաժեշտ է ամրակայել՝ հաշվի առնելով առաջադրվող նպատակները: Ծրագրի հաստատման ժամանակ կատարված կանխատեսումները հիմնականում հաստատվել են:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ծրագիրը կենսունակ է, պահանջարկված, ունի շահառուների հստակ շրջանակ: Ուսանողների հետ անցկացված հարցումներից պարզել ենք, որ այս ծրագիրը հնարավորություն է ընձեռում գիտելիքներ ստանալ թե՛ հայոց լեզվի պատմությունից, թե՛ գրաբարից ու միջին հայերենից, ինչպես նաև համեմատական լեզվաբանությունից և դասական լեզուներից, որը շատերը համարել են ծրագրի ակներև առավելություն, դրա շնորհիվ շրջանավարտներն ավելի մրցունակ են աշխատաշուկայում: Անհրաժեշտ է ավելի խորացնել այս առավելությունը՝ նախատեսել պահանջարկված նոր դասընթացներ, իսկ եղածները լրացնել, հարստացնել՝ ելնելով գիտության առաջընթացից ու ժամանակի պահանջներից: Ֆոկուս խմբի հարցումները վկայում են, որ անհրաժեշտություն կա առանձին դասընթացների համար ուսումնամեթոդական ձեռնարկների, դասախոսությունների տպագրման, ինչպես նաև գործնական առաջադրանքներին վերաբերող նյութերի պատրաստման: Այս ուղղությամբ աշխատանքներ արդեն ձեռնարկվում են:

**Կրթական ծրագրի SWOT աղյուսակը**

| **SWOT գործոնը** | Փաստացի վկայություն | Լավագույն փորձի զարգացման և տա- | Թույլ կողմերի շտկման և |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| | | րածման, հնարավո-րությունների օգտագործման առաջար-կություններ | վտանգների չեզո-քացման կամ մեղմացման առաջար-կություններ |
| **Ուժեղ կողմերը**<br>1. Լեզվաբանական մի քանի բնագավառների գիտելիքների ուսուցում՝ լեզվի պատմություն, գրաբարագիտություն, գրաբարից աշխարհաբար և միջին հայերենից աշխարհաբար թարգմանություններ, համեմատական, տիպաբանական լեզվաբանություն:<br>2. Գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների խորացում: | 1.Ուսուցանվում են համապատասխան դասընթացներ:<br>2.Ուսուցանվող տեսական գիտելիքները կիրառվում են գործնականում:<br>3. Կատարվում են անհատական բազմաբնույթ աշխատանքներ կատարվում:<br>4.Շրջանավարտների մեծամասնությունն աշխատանք է | 1.Փորձի փոխանակում մասնագիտական, գիտական այլ հաստատություննե րի հետ:<br>2.Նախաձեռնել համատեղ հետազոտական աշխատանքներ, գիտաժողովներ:<br>3.Հրատարակել առավել հաջողված աշխատանքները:<br>4. ԵՊՀ հարակից այլ մասնագիտությունն երի հետ | ----------- |

| | | | |
|---|---|---|---|
| 3. Լեզվաբանական գիտակարգերին վերաբերող տեսական և գործնական կարողությունների զարգացում:<br>4. Մրցունակ մասնագետի պատրաստում: | գտնում իր կամ հարակից մասնագիտությամբ: | միջգիտակարգային ծրագրերի մշակում: | |
| **Թույլ կողմերը**<br>1. Դասավանդողների և ուսանողների՝ օտար լեզուների ոչ բավարար իմացություն:<br>2. Տեխնիկական հագեցվածության անբավարար մակարդակ:<br>3. Դասագրքերի, ուղեցույց-ձեռնարկների պակաս:<br>4. Հարակից գիտակրթական | 1.Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների և ֆոկուս խմբի հարցման արդյունքները:<br>2. Առկա սարքերը սակավ են, համացանցային կապը հուսալի չէ:<br>3.Որոշ դասընթացների վերաբերյալ չկան անհրաժեշտ | ------------- | 1. Խորացնել օտար լեզուների ուսուցումը:<br>2.Ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ:<br>3.Ստեղծել կամ թարգմանել անհրաժեշտ մասնագիտական նորարարական գրականություն՝<br>4.Ուսանողների մասնակցությամբ նախաձեռնել |

| | | | |
|---|---|---|---|
| հաստատությունների հետ փոխգործակցության ոչ բավարար մակարդակ: | դասագրքեր, ձեռնակներ:<br>4.Համագործակցությու-նը հիմնականում սահմանափակվում է համատեղ գիտաժողովների անցկացմամբ: | | տարաբնույթ գիտական ծրագրեր, աշխատանքներ: |
| **Հնարավորությունները**<br>1. Արտերկրի ուսանողների առկա և հեռավար ուսուցում:<br>2. Սփյուռքահայ ուսանողների համար անհատական պահանջարկված դասընթացների կազմակերպում:<br>3. Հարակից այլ մասնագիտությունների ներկայացուցիչների համար և հարկ եղած այլ դեպքերում անհատական | 1.Ներկայումս սովորում է արտերկրի քաղաքացի 1 ուսանող:<br>2. Սփյուռքահայ ուսանողներ ներկայումս չկան:<br>3. Անհատական դասընթացների կազմակերպումը նախնական փուլում է: | 1. Ընդլայնել կապերն արտերկրի բուհերի հետ:<br>2. Ամրապնդել կապը սփյուռքի խոշոր գաղթօջախների և կրթական կենտրոնների հետ:<br>3. Ապահովել անհատական դասընթացների ընդգրկուն ցանկ ապահովել: | ———— |

| | | | |
|---|---|---|---|
| դասընթացների կազմակերպում: | | | |
| **Վտանգները**<br>1. Դիմորդների ընդհանուր թվի նվազում:<br>2. Դպրոցներում հումանիտար առարկաների, մասնավորապես՝ մայրենի լեզվի ուսուցման մակարդակի անկում: | 1. Ուսանողների քանակը նվազում:<br>2. Ընդունելության միավորներին իջնում: | ------------------- | 1.Ծրագրերի նորացում, ուսանողների հետ աշխատանքների խորացում: |

## 10. Որակի բարելավման (բարձրացման) գործողությունների պլանը

| Բարելավման ոլորտը/ առարկան | Պլանավորված միջոցառումը/ գործողությունը | Պատասխա-նատուն | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. Կրթական ծրագրեր | 1. Ծրագրերի վերանայում, արդիականացում<br>2. Տեղեկատվական տեխնոլոգիաներով | Ծրագրի ղեկավար բ.գ.դ., պրոֆ. Ա. Աբաջյան | 1. 01.04.2020-01.09.2020<br>2. 01.04.2020-01.09.2021 |

| | | | |
|---|---|---|---|
| 2.Ուսուցման և դասավանդման մեթոդներ<br><br>3.Դասավանդմանն անհրաժեշտ նյութեր<br>4.Ուսանողների հետ տարվող աշխատանքներ | հազեցած դասավանդման մեթոդների ընդլայնում<br>3. Դասընթացների դասավանդման համար էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում<br><br>4. Հանդիպումների, կրթական ծրագրերի քննարկումների, բանավեճերի, մրցույթների կազմակերպում | | 3. 1.09.2020<br>01.09.2021<br><br>4. 31.04.2020-<br>31.05.2022 |

**Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ**

1. «Հայոց լեզվի պատմություն և ընդհանուր լեզվաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի մոնիթորինգային հաշվետվությունը ձևով և բովանդակությամբ համապատասխանում է սահմանված պահանջներին:
2. Սույն կրթական ծրագրով մագիստրոսական հաշվետվությունը հիմնված է փաստացի տվյալների վրա և արտացոլում է ծրագրի իրական վիճակը:
3. Ծրագրում հաշվի են առնված հնարավոր վտանգները, և ըստ այդմ՝ նշված են մեղմացման հնարավորությունները և բարելավման ուղղությունները:
4. Սույն ծրագիրն մրցունակ է դառնում նաև այն հանգամանքի հաշվին, որ պատրաստում է հայոց լեզվի պատմության, ընդհանուր լեզվաբանության, գրաբարի մեջ առավել խորացված մասնագետներ:

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նիստում (*որոշում թիվ 1 , 20.01.2020*)։

Որակի ապահովման հանձնաժողովի նախագահ՝ Ա. Աբաջյան

Մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի (կենտրոնի ղեկավարության նիստի) կողմից (*որոշում թիվ 1, 24.01.20*)։

Մոնիթորինգի հաշվետվությունը ստուգվել է ԵՊՀ ՈԱԿ-ի կողմից։

**Այսպիսով՝**

**ԼՍԵՑԻՆ** - Մագիստրատուրայի կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքների ամփոփման հարցը։

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Վ. Պետրոսյանը և Ա. Ջրբաշյանը։

Ելույթ ունեցողները հայտնեցին իրենց դիտարկումները ու եկան հետևյալ եզրակացությունների.

1. Մագիստրոսական կրթական ծրագրերի մոնիթորինգային հաշվետվությունը ձևով ու բովանդակությամբ համապատասխանում է սահմանված պահանջներին։
2. Սույն կրթական ծրագրով մագիստրոսական հաշվետվությունը հիմնված է փաստացի տվյալների վրա և արտացոլում է ծրագրերիի իրական վիճակը։
3. Ծրագրերում հաշվի են առնված հնարավոր վտանգները, և ըստ այդմ՝ նշված են մեղմացման հնարավորություններն ու բարելավման ուղղությունները։
4. Սույն ծրագրերը մրցունակ են դառնում նաև այն հանգամանքի հաշվին, որ պատրաստում են համապատասխան առարկաների մեջ առավել խորացված մասնագետներ։

Ելույթ ունեցողները հավելեցին, որ մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի ո-րակի ապահովման հանձնաժողովի նիստում (*որոշում թիվ 1 , 20.01.2020)* և հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի (կենտրոնի ղեկավարության նիստի) կողմից (*որոշում թիվ 1, 24.01.20*)։ Բացի այդ՝ մոնիթորինգի հաշվետվությունը ստուգվել է ԵՊՀ ՈԱԿ-ի կողմից։

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել մագիստրատուրայի կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքները։

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Աստղիկ Արարատի Օհանյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկա-վարի հաստատման հարցերը։

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** – Բան. գիտ. դոկտոր, պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիել-յանը և բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանը։

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Հովհաննես Գրիգորյանի պոետիկան»։

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Հաստատել

1. **Աստղիկ Արարատի Օհանյանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հովհաննես Գրիգորյանի պոետիկան»՝ ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն. գրականության տեսություն» մասնագիտությամբ։
2. Գիտական ղեկավար նշանակել բան. գիտ. թեկն., դոցենտ Սեյրան Գրիգոր-յանին։

**Լ Ս Ե Ց Ի Ն.**- Ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Սալպի Աղիայի Քյուրքճեանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը։

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** – Բան. գիտ. դոկտոր, պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը և բան. գիտ. թեկն., դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ղազարյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Պողոս Մնապյան. գրականագետը և գրողը»:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Հաստատել

1. **Սալպի Աղիայի Քյուրքճեանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պողոս Մնապյան. գրականագետը և գրողը»՝ Ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն. գրականության տեսություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար նշանակել բան. գիտ. դոկտ., պրոֆ. Վազգեն Գաբրիելյանին:

**Լ Ս Ե Ց Ի Ն.**- Հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Արմենուհի Արզումանյանի** «Գրականության դասավանդման մեթոդներ, ձևեր» մեթոդական օժանդակ լրամշակված ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. –** Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Վ. Սաֆարյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Արմենուհի Արզումանյանը 2014 թվականին լույս տեսած համանուն ձեռնարկում ներկայացված գրականության ուսուցման կազմակերպման մեթոդների և ձևերի շարքը համալրել է նոր մեթոդների նմուշներով: Մատնանշված մեթոդները և ուսուցման եղանակները ներկայացվում են հայ և համաշխարհային գեղարվեստական երկերի ու գեղանկարչական գործերի հմուտ ընտրությամբ և վկայակոչմամբ, ինչը հնարավորություն է ընձեռում մի կողմից խորացնելու ուսուցանվող նյութի ըմբռնումը, մյուս կողմից ընդլայնելու սովորողների գիտելիքի շրջանակը:

Նյութը ներկայացված և մեկնաբանված է պարզ ու պատկերավոր լեզվով, գործուն մեթոդաբանությամբ, համոզիչ օրինակներով, տեսանելի զուգադրումներով, համարժեք եզրահանգումներով: Ձեռնարկը կարող է հետաքրքրել և օգտակար լինել մասնագիտական լայն լսարանի, ուստի և արժանի է տպագրության:

**ՈՐՈՇԵՑԻՆ. – Արմենուհի Արզումանյանի** «Գրականության դասավանդման մեթոդներ, ձևեր» մեթոդական օժանդակ ձեռնարկը երաշխավորել տպագրության:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի հայցորդ **Թինա Սեյրանի Այվազյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը**։

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** - Պրոֆ. Ժ. Քալանթարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը։

Նրանք նշեցին, որ Լևոն Խեչոյանի արձակի առասպելական տարրերը գրականագիտության մեջ դեռևս չեն դարձել համապարփակ քննության նյութ, սակայն դրանք շատ կարևոր են արձակագրի ստեղծագործական համակարգն առավել ամբողջականորեն մեկնաբանելու համար։

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – 1. Հաստատել Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի հայցորդ **Թինա Սեյրանի Այվազյանի՝ «Առասպելականի և էպիկականի հարաբերությունը Լևոն Խեչոյանի արձակում»** թեկնածուական ատենախոսության թեման «Նորագույն շրջանի հայ գրականություն և գրականության տեսություն» (Ժ. 01. 02) մասնագիտությամբ։

2. Գիտական ղեկավար հաստատել գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. **Ժենյա Անդրանիկի Քալանթարյանին**։

Վերջում նախագահողը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, ելույթ ունեցողներին, և գիտական խորհրդի նիստը համարվեց ավարտված։

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ